ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԻ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ ՀԱՅ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ՎՈԼՈԴՅԱ ԳԱՍՊԱՐՅԱՆ

Պատերազմի տարիներին Հայ առաքելական եկեղեցու կողմից հանգանակված միջոցներով «Սասունցի Դավիթ» տանկային երկու շարասյուն կառուցվեց, առաջինը բաղկացած է 21 «Տ-34», իսկ երկրորդը՝ 22 «Տ-34» տանկերից, որոնք մասնակցել են Ուկրաինայի, Բելոռուսիայի և Մերձբալթիկայի ազատագրմանը: Տանկային շարասյուները ստեղծելու գաղափարը պատկանում է Կաթողիկոսի տեղապահ արքեպիսկոպոս Գևորգ Չորեքչյանին, ով 1945թ. հունիսի 23-ին ընտրվեց Ամենայն Հայոց կաթողիկոս: Եկեղեցու կողմից բանակին ցույց տրված օգնությանը, մասնավորապես «Սասունցի Դավիթ» տանկային շարասյան կառուցման հիմնահարցին իրենց աշխատություններում անդրադարձել են Երվանդ Խալեյանը, Արամայիս Մնացականյանը, Մարատ Սահակյանը, Կլիմենտ Հարությունյանը, Արուսյակ Տերչանյանը՝ զգալի ներդրում կատարելով այդ բնագավառում: Սակայն դրա հետ մեկտեղ, առ այսօր հայ պատմագրության մեջ այս հիմնահարցին նվիրված առանձին և ամբողջական ուսումնասիրություն չկա: Ուստի հայ պատմագրությունը դեռ անելիք ունի այս բնագավառում, մասնավորապես «Սասունցի Դավիթ» տանկային շարասյան կազմավորման և նրա մարտական գործողություններն ամբողջովին լուսաբանելու ուղղությամբ:

Բանալի բառեր – պատերազմ, պատմություն, բանակ, պատմագրություն, հայ, գաղթօջախներ, հանգանակություն:

1941-1945թթ. Հայրենական մեծ պատերազմի տարիներին Հայ առաքելական եկեղեցին զգալի ավանդ է ներդրել կարմիր բանակի կողմից ֆաշիստական Գերմանիայի դեմ տարած հաղթանակում: Այդ ամենից առաջ դրսևորվել է կարմիր բանակի կազմում Հայ առաքելական եկեղեցու կողմից հանգանակած միջոցներով «Սասունցի Դավիթ» տանկային երկու շարասյուն կազմավորվելով: Այդ շարասյուներն ակտիվորեն մասնակցել են մարտական գործողություններին և իրենց նպաստը բերել Ուկրաինայի, Բելոռուսիայի և Մերձբալթիկայի տարածքները գերմանաֆաշիստական զավթիչներից ազատագրելու գործում: Ուստի պատահական չէ, որ հայ պատմագրության տեսադաշտից դուրս չի մնացել Հայ առաքելական եկեղեցու կողմից կարմիր բանակին ցույց տված օգնության հիմնահարցը:

«Սասունցի Դավիթ» տանկային շարասյուն ստեղծելու գաղափարը պատկանում է Հայ առաքելական եկեղեցու կաթողիկոսի տեղապահ արքեպիսկոպոս Գևորգ Չորեքչյանին: Նա հետևեց Ռուս ուղղափառ եկեղեցու մետ-

ռոպոլիտ Սերգիին, ով Ի.Վ. Ստալինի հավանությամբ ռուս հավատացյալներից հանգանակած գումարներով ստեղծել էր «Դմիտրի Դոնսկոյ» տանկային շարասյունը և այն նվիրել կարմիր բանակին: Արքեպիսկոպոս Գևորգ Չորեքչյանը, ով պատերազմի ավարտից հետո՝ 1945թ. հունիսի 23-ին, ընտրվեց Ամենայն Հայոց կաթողիկոս, լավ էր հասկանում, որ կարմիր բանակի համար տանկային շարասյան կառուցումը զգալի չափով կնպաստի եկեղեցու դերի բարձրացմանը, ուստի նա այդ գաղափարը հոգևոր խորհրդում քննարկելուց հետո դիմեց խորհրդային իշխանությանը: Ստանալով համաձայնություն՝ Գևորգ Չորեքչյանը դիմեց գործնական քայլերի: Առաջին հերթին նա 1943թ. հունվարի 25-ին ԽՍՀՄ պետբանկի հայկական բաժանմունքին հանձնեց ավելի քան 800 000 արժողությամբ թանկարժեք իրեր, 1000 անգլիական ֆունտ սթեռլինգ և 50000 ռուբլի[1]: Խորհրդային կառավարության որոշմամբ ԽՍՀՄ պետբանկի հայկական բաժանմունքում հատուկ հաշիվ է բացվում Հայ առաքելական եկեղեցու կողմից հավաքագրվող միջոցների մուծման համար: Դրանից հետո արքեպիսկոպոս Գևորգ Չորեքչյանը դիմում է սփյուռքահայությանը՝ ակտիվորեն մասնակցել «Սասունցի Դավիթ» տանկային շարասյան կառուցման համար դրամական միջոցներ հանգանակելու խնդրանքով: Արտասահմանյան բազմաթիվ երկրներում ապրող հայերն անմիջապես արձագանքեցին Հայ առաքելական եկեղեցու առաջնորդի կոչին և սկսեցին ԽՍՀՄ պետբանկի հայկական բաժանմունքի համապատասխան հաշվին դրամական միջոցներ փոխանցել: Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության քարտուղար Գ. Գալստյանի կողմից արքեպիսկոպոս Գևորգ Չորեքչյանին 1943թ. ապրիլի 26-ին ուղարկած հաղորդումից իմանում ենք, որ սփյուռքահայերից ստացվել է 15800 դոլար, իսկ 1943թ. սեպտեմբերի 25-ի տվյալներով այդ գումարի չափը հասել էր 120 800 դոլարի, 15200 անգլիական ֆունտ սթեռլինգի և 1187 145 պարսկական ռիալի[2]: Հանգանակությունը կատարել էին Նյու Յորքի, Հարավային Ամերիկայի, Երուսաղեմի, Թավրիզի, Սպահանի, Ֆրեզնոյի, Կիպրոսի, Կահիրեի, Բեյրութի և Թեհրանի հայերը: Բացի դրանից, կարմիր բանակի համար ուղարկվել էին 137 000 դոլարի դողորայք և բժշկական պարագաներ: 1944թ. փետրվարի 9-ին Բեյրութից «Խորհրդային Հայաստանի բարեկամություն» կազմակերպության քարտուղար Եփրեմ Իլլեզյանը և նախա-

[1] Советская Армения в годы Великой Отечественной войны (1941-1945). Сборник документов и материалов. Ереван, 1975, стр. 713.
[2] Նույն տեղում, էջ 714:

գահ Հրանտ Դևեջյանը Խորհրդային Հայաստանի կառավարությանը հայտնում են, որ «Սասունցի Դավիթ» տանկային շարասյան կառուցման համար առաջին անգամ Հալեպում հավաքել են 4400 ոսկի, իսկ Բեյրութում՝ 8000, իսկ երկրորդ անգամ՝ 20 000 ոսկի[3]:

Հանգանակված դրամական միջոցների հաշվին կառուցվեց «Սասունցի Դավիթ» տանկային 1-ին շարասյունը՝ բաղկացած 21 «Տ-34» միջին տանկերից, որը 1944թ. փետրվարի 29-ին հանդիսավոր պայմաններում հանձնվեց 1-ին Ուկրաինական ռազմաճակատին: Դրանով չավարտվեց կարմիր բանակին օժանդակելու համար սկսված դրամական միջոցների հանգանակությունը սփյուռքահայ հավատացյալների շրջանում: Հայ առաքելական եկեղեցու հայրենասիրական կոչերի շնորհիվ շարունակվեց դրամահավաքը, որի շնորհիվ կառուցվեց «Սասունցի Դավիթ» տանկային 2-րդ շարասյունը: Ամենայն Հայոց կաթողիկոսի տեղապահ արքեպիսկոպոս Գևորգ Չորեքչյանի կողմից 1944թ. մայիսի 28-ին Ի.Վ. Ստալինին ուղարկված հեռագրից իմանում ենք, որ տանկային երկրորդ շարասյուն կառուցելու համար միայն Թեհրանի հայ հավատացյալները հավաքել են 1 745 00 ռիալ, ամերիկահայերը՝ 10000 դոլար, իսկ Մեծ Բրիտանիայի հայերը՝ 10000 անգլիական ֆունտ սթեռլինգ: 1944թ. հունիսի 7-ին Ի.Վ. Ստալինն արքեպիսկոպոս Գևորգ Չորեքչյանին ուղղված պատասխան հեռագրում շնորհակալություն է հայտնում «Սասունցի Դավիթ» տանկային 2-րդ շարասյան կառուցման նպատակով արտասահմանում ապրող հավատացյալ հայերի հավաքած դրամական միջոցների համար[4]: Մի քանի օր անց՝ 1944թ. հունիսի 12-ին, Հայ առաքելական եկեղեցու ԱՄՆ-ի հայկական թեմի առաջնորդ արքեպիսկոպոս Գարեգին Հովսեփյանը Գևորգ Չորեքչյանին հայտնում է «Սասունցի Դավիթ» տանկային նոր շարասյուն կառուցելու համար 40 000 դոլար փոխանցելու մասին[5]:

«Սասունցի Դավիթ» տանկային 2-րդ շարասյունը՝ բաղկացած 22 «Տ-34» տանկերից, 1944թ. հունիսին հանձնվեց բանակի գեներալ (հետագայում Խորհրդային Միության մարշալ) Հովհաննես Բաղրամյանի հրամանատարությամբ մարտնչող 1-ին Մերձբալթյան ռազմաճակատին: Այդ ռազմաճակատի կազմում «Սասունցի Դավիթ» տանկային երկրորդ շարասյունը, որի տանկերի վրա հայերեն և ռուսերեն տառերով գրված էր հայ էպոսի դյուցազնական

---

[3] Նույն տեղում, էջ 715:
[4] Նույն տեղում, էջ 721:
[5] Նույն տեղում, էջ 724:

հերոսի անունը, մասնակցեց Բելոռուսիայի և Մերձբալթիկայի ազատագրման մարտերին, գերմանաֆաշիստական զավթիչներին հասցրեց խորտակիչ հարվածներ և արժանացավ կարմիր դրոշի շքանշանի[6]:

Այս բացատրական նախաբանից հետո այժմ անդրադառնանք, թե հայ պատմագրությունն ինչպես է լուսաբանել Հայ առաքելական եկեղեցու կողմից Հայրենական մեծ պատերազմի տարիներին կարմիր բանակին ցույց տրված օգնությունը:

Հայ պատմաբաններից առաջինը, ով անդրադարձել է Հայրենական մեծ պատերազմի տարիներին Հայ առաքելական եկեղեցու կողմից կարմիր բանակին օգնություն ցույց տալու հիմնահարցին, պատմական գիտությունների թեկնածու Երվանդ Մկրտչի Խալեյանն էր: Չնայած նա այդ հիմնահարցին նվիրված առանձին ուսումնասիրություն չունի, բայց և այնպես իր մի շարք աշխատություններում համառոտակի լուսաբանել է նաև այն: Այսպես, օրինակ, 1970թ. լույս տեսած «Հայ ժողովրդի պատմություն» բազմահատորյակի 8-րդ հատորի՝ «Սփյուռքահայության մասնակցությունը հակաֆաշիստական պայքարին (1941-1945)» չորրորդ գլխում անդրադարձել է այդ հիմնահարցին և նշել, որ «Սասունցի Դավիթ» տանկային շարասյունը կառուցվել է Հայ առաքելական եկեղեցու նախաձեռնությամբ և աշխարհի հավատացյալ հայերի միջոցներով[7]:

Ե.Մ. Խալեյանը վերոհիշյալ հիմնահարցին անդրադարձել է նաև իր՝ «Հայ ժողովրդի մասնակցությունը Բելոռուսիայի համար մղված մարտերին (1941-1944թթ.)» մենագրության մեջ[8], որտեղ նա համառոտակի, բայց հիմնավոր լուսաբանում է «Սասունցի Դավիթ» տանկային 2-րդ շարասյան մարտական գործողությունները Բելոռուսիայի տարածքում: Ե.Մ. Խալեյանը հայ պատմաբաններից առաջիններից մեկն էր, որ ԽՍՀՄ պաշտպանության կենտրոնական արխիվից հայտնաբերել էր «Սասունցի Դավիթ» տանկային շարասյան մարտական գործողությունների մասին հետաքրքիր և արժեքավոր փաստեր: Շարասյունը Բելոռուսիայի մարտական գործողություններին մասնակցել էր 1-ին Մերձբալթյան ռազմաճակատի (հրամանատար՝ բանակի գեներալ Հովհաննես Բաղրամյան) 119-րդ տանկային գնդի կազմում և օժանդակում էր 51-րդ գվարդիական (նախկին Հայկական 76-րդ) հրաձգային

---

[6] **Խալեյան Ե.Մ.**, Հայ ժողովրդի զավակների մասնակցությունը Բելոռուսիայի համար մղված մարտերին (1941-1945թթ.), Երևան, 1975, էջ 251:
[7] Հայ ժողովրդի պատմություն, Երևան, 1970, էջ 158:
[8] **Խալեյան Ե.Մ.**, նշվ. աշխ., էջ 250, 251:

դիվիզիային: Միայն Բելոռուսական Պոլոցկ քաղաքի ազատագրման մարտերում «Սասունցի Դավիթ» տանկային շարասյան անձնակազմը ոչնչացրեց հակառակորդի 19 հրանոթ, 29 ականանետ, ավելի քան 450 ֆաշիստական զինվոր ու սպա, պայթեցրեց հակառակորդի 70 հակատանկային ական (շարասյունը հարմարեցված էր նաև ականադաշտերը ոչնչացնելու միջոցներով):

«Սասունցի Դավիթ» տանկային շարասյան մարտական գործողությունները լուսաբանել է նաև պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արամայիս Նավասարդի Մնացականյանը 1975թ. հրատարակած իր «Միասնական շարքերում» մենագրության համապատասխան էջերում[9]: Սակայն պրոֆեսոր Ա.Ն. Մնացականյանը, չգիտես ինչու, էջ 465-ում մեջբերելով կարմիր բանակի զրահատանկային զորքերի հրամանատարի օգնական, տանկային զորքերի գեներալ-լեյտենանտ Կորոբկովի հեռագիրը «Սասունցի Դավիթ» տանկային շարասյան՝ մարտական շարք ընդունելու մասին, չի նշում, որ այդ հեռագիրն ուղղված է եղել արքեպիսկոպոս Գևորգ Չորեքչյանին 1944թ. ապրիլի 4-ին: Բացի դրանից մեջբերումը կատարված է կիսատ-պռատ, որի հետևանքով ընթերցողը չի կարող հասկանալ, թե ում նախաձեռնությամբ է կառուցվել այդ շարասյունը: Որպեսզի հստակ լինի մեր ասածը, ամբողջությամբ տալիս ենք այդ հեռագիրը, որը տպագրված է «Советская Армения в годы Великой Отечественной войны (1941-1945)» փաստաթղթերի ու նյութերի ժողովածուի 719-րդ էջում, որտեղ նշված է, որ հեռագիրը հասցեագրված է արքեպիսկոպոս Չորեքչյանին՝ «Սասունցի Դավիթ» տանկային շարասյունը կարմիր բանակին հանձնելու առթիվ: 1944թ. ապրիլի 4-ի թվակիր այդ հեռագրում ասված է. «1944թ. փետրվարի 29-ին հանդիսավոր պայմաններում կարմիր բանակի N տանկային զորամասին է հանձնվել «Սասունցի Դավիթ» տանկային շարասյունը, որը կառուցվել է Ձեր նախաձեռնությամբ՝ հայ հոգևորականության և Խորհրդային Միությունում ու արտասահմանում ապրող հայ հավատացյալների միջոցներով: Ընդունելով տանկային շարասյունը՝ տանկիստները երդվեցին «Սասունցի Դավիթ» անունը կրող տանկերով անխնա ջախջախել գերմանական զավթիչներին: Տանկային շարասյունը արդեն մարտերի մեջ է»[10]: Պրոֆեսոր Ա.Ն. Մնացականյանը չի նշում նաև, որ խոսքը վերաբերում էր «Սասունցի Դավիթ» տանկային 1-ին շարասյանը, ոչ թե

---

[9] **Մնացականյան Ա.Ն.**, Միասնական շարքերում, Երևան, 1975, էջ 464, 465:

[10] Советская Армения в годы Великой Отечественной войны (1941-1945). Сборник документов и материалов, стр. 719.

երկրորդին, որը մարտերի մեջ է մտել 1944թ. հունիսին Բելոռուսիայում:

«Սասունցի Դավիթ» տանկային շարասյան հիմնահարցին անդրադարձել է նաև պատմական գիտությունների դոկտոր Մարատ Գուրգենի Սահակյանն իր «Սովետական Մերձբալթիկայի համար մղված մարտերում» մենագրության մեջ[11]: Մարատ Սահակյանն այն եզակի հայ պատմաբաններից էր, ով երկար տարիներ շարունակ աշխատել էր ԽՍՀՄ պաշտպանության նախարարության կենտրոնական արխիվում (Մոսկվայի մարզ, ք.Պոդոլսկ) և առաջինն էր, որ մանրամասն ուսումնասիրել էր այդ արխիվում պահվող 119-րդ առանձին տանկային գնդի ֆոնդը, որի մեջ են մտել «Սասունցի Դավիթ» տանկային 2-րդ շարասյան մարտական մեքենաները:

«Սփյուռքահայության շրջանում լայն արձագանք գտավ արքեպիսկոպոս Գևորգ Չորեքչյանի՝ 1943թ. փետրվարի 21-ի կոչը՝ «Սասունցի Դավիթ» տանկային շարասյունը կառուցելու մասին,- նշում է Մարատ Սահակյանը,- նույն թվականի նոյեմբերին ԱՄՆ-ում ստեղծվեց գործադիր կոմիտե՝ «Սասունցի Դավիթ» տանկային շարասյան կառուցման ֆոնդի օգտին միջոցներ հանգանակելու համար: «Սասունցի Դավիթ» տանկային շարասյուն կառուցելու ֆոնդի համար միջոցների հավաքումը կազմակերպելու գործում ակտիվ մասնակցություն ունեցավ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Աշոտ Աբրահամյանը: 1944թ. սկզբին նա Գևորգ Չորեքչյանի հատուկ հանձնարարականով մեկնեց Մերձավոր Արևելքի երկրներ, հանդիպումներ ու զրույցներ ունեցավ Իրանի, Եգիպտոսի, Սիրիայի, Իրաքի, Լիբանանի, Երուսաղեմի հայ գաղթօջախների ղեկավարների հետ, զեկույցներով հանդես եկավ սփյուռքահայ աշխատավորների առաջ: Կարմիր բանակին օգնելու շարժումը լայն թափ ստացավ սփյուռքում»[12]: Հավաքված գումարների հաշվին կառուցվեց «Սասունցի Դավիթ» տանկային 2-րդ շարասյունը, որը հանձնվեց 1-ին Մերձբալթյան ռազմաճակատի կազմում մարտնչող 119-րդ առանձին տանկային գնդին:

«Գեներալ Բաղրամյանի զորքերի կազմում «Սասունցի Դավիթ» տանկային շարասյունը մարտերով Վիտեբսկից (Բելոռուսիա-Վ.Գ.) հասավ Բալթիկ ծով, ոչնչացրեց 3000 գերմանական զինվոր ու սպա, 22 տանկ ու ինքնագնաց հրանոթ, 105 թնդանոթ, 72 ականանետ, 188 գնդացիր, 74 դզոտ, 16 ավտոմեքենա, 3 պահեստ, պայթեցրեց 250 հակատանկային ավան, գրավեց 3 տանկ,

---

[11] **Սահակյան Մ.Գ.**, Սովետական Մերձբալթիկայի համար մղված մարտերում, Երևան, 1981:

[12] Նույն տեղում, էջ 94:

47 թնդանոթ ու ականանետ, 30 գնդացիր, գերի վերցրեց 120 հիտլերական»,- իր մենագրության մեջ նշում է Մ.Գ.Սահակյանը[13]:

Իր աշխատություններում «Սասունցի Դավիթ» տանկային շարասյան մարտական գործողություններին համառոտակի անդրադարձել է նաև պատմական գիտությունների դոկտոր Կլիմենտ Ամասիայի Հարությունյանը: Այսպես, օրինակ, նա իր «Հայ ժողովրդի մասնակցությունը Հայրենական մեծ պատերազմին (1941-1945թթ.)» մենագրության մեջ, անդրադառնալով Բելոռուսիան գերմանաֆաշիստական զավթիչներից ազատագրման մարտերին հայ ռազմիկների, մասնավորապես 51-րդ գվարդիական հրաձգային դիվիզիայի շարքերում բելոռուսական Պոլոցկ քաղաքի ազատագրման մարտական գործողությանը հայ գվարդիականների մասնակցության հարցին, նշում է. «51-րդ գվարդիական հրաձգային դիվիզիայի հաջողությունների մեջ իր արժանի ավանդն ուներ 119-րդ տանկային գունդը, որը գվարդիականներին աջակցում էր Պոլոցկի ազատագրման մարտերում, այդ գունդը ամբողջովին համալրված էր Հայ առաքելական եկեղեցու կողմից սփյուռքահայերի շրջանում կազմակերպված հանգանակության շնորհիվ ստեղծված «Սասունցի Դավիթ» տանկային շարասյան տանկերով: Գունդը Պոլոցկի ազատագրման համար պարգևատրվեց Կարմիր դրոշի շքանշանով»[14]: Կ.Ա. Հարությունյանը գրքի 56-րդ էջում նշում է, որ Լատվիայի և Լիտվայի ազատագրման մարտերին 51-րդ գվարդիական հրաձգային դիվիզիային դարձյալ աջակցում էր «Սասունցի Դավիթ» տանկային շարասյունը: Նույն գրքի 119-րդ էջում նշված է, որ Հայ առաքելական եկեղեցու նախաձեռնությամբ սփյուռքահայերի հանգանակած դրամական միջոցներով կառուցվեց «Սասունցի Դավիթ» տանկային շարասյունը: Այդ միտքը Կ.Ա. Հարությունյանը զարգացրել է նաև իր «Участие Армянского народа в Великой Отечественной войне Советского Союза (1941-1945)» մենագրության համապատասխան էջերում, ինչպես նաև «Հայոց պատմություն», հատոր 4-րդ, գիրք 1-ին և «Հայոց պատմություն» կոլեկտիվ աշխատություններում[15]:

---

[13] Նույն տեղում, էջ 95:

[14] **Հարությունյան Կ.Ա.**, Հայ ժողովրդի մասնակցությունը Հայրենական մեծ պատերազմին (1944-1945թթ.), Երևան, 2002, էջ 51:

[15] **Арутюнян К. А.** Участие Армянского народа в Великой Отечественной войне Советского Союза. Ереван, 2004, стр. 573. 714, Հեղինակային կոլեկտիվ, Հայոց պատմություն, հ.4-րդ, գիրք 1-ին, Երևան, 2010, էջ 571, Հայոց պատմություն դասագիրք բարձրագույն ուսումնական հաստատությունների համար, Երևան, 2012, էջ 666:

Հայ առաքելական եկեղեցու նախաձեռնությամբ սփյուռքահայերի հանգանակած դրամական միջոցների հաշվին կառուցված և կարմիր բանակին հանձնված «Սասունցի Դավիթ» տանկային շարասյան հիմնահարցին հայ պատմագրության մեջ համեմատաբար ավելի մանրամասնորեն է անդրադարձել պատմական գիտությունների թեկնածու Արուսյակ Սամսոնի Տերչանյանն իր «Հայ առաքելական եկեղեցին Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին (1939-1945թթ.)» և «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի գործունեությունը Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին» մենագրություններում[16]:

«Հայ առաքելական եկեղեցին Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին (1939-1945թթ.)» աշխատության մեջ, անդրադառնալով Հայրենական մեծ պատերազմի սկսվելուց հետո Խորհրդային Միության կառավարության՝ եկեղեցու նկատմամբ ունեցած քաղաքականության կտրուկ փոփոխությանը, Արուսյակ Տերչանյանը նշում է. «Երկրում ծայր առած Հայրենական մեծ պատերազմի հրդեհը մի տեսակ հարկադրանք հանդիսացավ խորհրդային կառավարությանը՝ դադարեցնելու հակաեկեղեցական քաղաքականությունը և ժողովրդին համախմբելու միասնական պայքարի դուրս գալու: Կատարված շրջադարձը թեև խորամանկ, բայց և առաջընթաց քայլ էր, որը կենդանության և գործունեության հնարավորություն ընձեռեց Հայ եկեղեցուն:

Հայրենական մեծ պատերազմի հենց սկզբից Հայ առաքելական եկեղեցին լծվեց հայրենիքի պաշտպանության գործին: Ամենայն Հայոց Հայրապետության տեղապահ Գևորգ Չորեքչյանը, գիտակցելով այդ հանգամանքը, 1941թ. հուլիսի 4-ին կոչով դիմեց ողջ հայությանը՝ սատար կանգնել վտանգի ենթարկված հայրենիքին, որը այդ պահին եկեղեցու պարտականությունը տեսնում էր ակտիվ քաղաքական գործունեության և բարեգործության մեջ»[17]:

Այնուհետև Ա.Ս. Տերչանյանը նշում է, որ Հայ առաքելական եկեղեցին, հետևելով Ռուս ուղղափառ եկեղեցու օրինակին, որը հանդես էր եկել կարմիր բանակի համար «Դմիտրի Դոնսկոյ» տանկային շարասյուն կառուցելու նպատակով դրամական միջոցներ հավաքելու կոչով, ապավինելով սփյուռքահայության բարոյական և նյութական օժանդակությանը, որոշեց հանգանա-

[16] **Տերչանյան Ա.Ս.**, Հայ առաքելական եկեղեցին Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին (1939-1945թթ.), Երևան, 2001: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի գործունեությունը Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին, Երևան, 2010:

[17] **Տերչանյան Ա.Ս.**, Հայ առաքելական եկեղեցին Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին, էջ 39-49:

կության միջոցով ստեղծել «Սասունցի Դավիթ» տանկային շարասյուն և այն հանձնել կարմիր բանակին: Արդեն 1943թ. հունվարին արքեպիսկոպոս Գևորգ Չորեքչյանը տանկային շարասյան կառուցման ֆոնդի համար ԽՍՀՄ պետական բանկում հատուկ հաշիվ բացելու խնդրանքով դիմեց Ի.Վ. Ստալինին. «Էջմիածնի կաթողիկոսարանը «Սասունցի Դավիթ» տանկային շարասյան կառուցելու ֆոնդին հատկացնում է ադամանդներով զարդարված մի թանկարժեք պանակե և թանկարժեք իրեր՝ պլատինից և ադամանդներից՝ ավելի քան 850 հազար ռուբլի արժողությամբ, 1000 անգլիական ֆունտ սթեռլինգ և 50 հազար ռուբլի: Խնդրում եմ Ձեր կարգադրությունը ԽՍՀՄ պետբանկում հատուկ հաշիվ բացելու մասին: Միաժամանակ հատուկ կոնդակով դիմում եմ աշխարհիս բոլոր հավատացյալ հայերին, որ իրենց խնայողություններով մասնակցեն «Սասունցի Դավթի» անվան տանկային շարասյան կառուցմանը»[18]: 1943թ. հունվարի 26-ին Խորհրդային Միության կառավարության ղեկավար Ի.Վ. Ստալինն իր պատասխան հեռագրում նշում է. «Ամենայն Հայոց Կաթողիկոսի տեղապահ Գևորգ Արքեպիսկոպոս Չորեքչյանին. խնդրում եմ իմ ողջույնը և կարմիր բանակի շնորհակալությունը հայտնել հավատացյալ հայերին ու Էջմիածնի կաթողիկոսարանի հոգևորականությանը, որ միջոցներ է մուծել «Սասունցի Դավիթ» տանկային շարասյուն կառուցելու համար: ԽՍՀՄ պետբանկում հատուկ հաշիվ բանալու համար ցուցում է տրված: Ի. Ստալին »[19]:

Այնուհետև Արուսյակ Տերչանյանը մանրամասն լուսաբանում է Հայ առաքելական եկեղեցու կողմից նախաձեռնված և սփյուռքահայերի հանգանակությամբ կառուցվող «Սասունցի Դավիթ» տանկային շարասյան կազմավորման գործընթացը, մեկ առ մեկ նշում Սփյուռքի տարբեր համայնքներից հանգանակված գումարների չափը և այլն:

Ա.Ս. Տերչանյանը «Սասունցի Դավիթ» տանկային շարասյան կառուցման հիմնահարցը լուսաբանել է նաև իր՝ «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի գործունեությունը Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին (1939-1945թթ.)» մենագրության մեջ: Այդ աշխատության 38-65-րդ էջերում հեղինակը ոչ միայն նոր փաստեր է բերում «Սասունցի Դավիթ» տանկային շարասյան կառուցման համար սփյուռքահայերի կատարած հանգանակության և տանկային երկու շարասյուների մարտական գործողությունների մասին, այլև հրապարակում է աղյուսակներ, որտեղ, ըստ տարեթվերի, արժեքավոր թվական

[18] Նույն տեղում, էջ 45, 46:
[19] Նույն տեղում, էջ 47:

տվյալներ է բերում աշխարհի տարբեր երկրների հայկական համայնքներից հանգանակված դրամական միջոցների վերաբերյալ: Ա.Ս.Տերչանյանը, ամփոփելով պատերազմի տարիներին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հայրենանպաստ և հակաֆաշիստական գործունեությունը, գալիս է այն հետևության, որ այդ քաղաքականությունը և կարմիր բանակին նյութական օգնություն կազմակերպելը մեծ չափով նպաստեցին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի դիրքերի ամրապնդմանը, եկեղեցի–պետություն հարաբերությունների կարգավորմանը, ինչպես նաև մայր հայրենիքի հետ Սփյուռքի հայության սերտ հարաբերությունների հաստատմանը[20]:

Այսպիսով, ամփոփելով մեր այս ուսումնասիրության արդյունքները, գալիս ենք այն եզրահանգման, որ հայ պատմագրությունը պատշաճ ուշադրություն է դարձրել Հայրենական մեծ պատերազմի տարիներին Հայ առաքելական եկեղեցու կողմից կարմիր բանակին նյութական օժանդակություն ցույց տալու, մասնավորապես «Սասունցի Դավիթ» տանկային երկու շարասյուն կառուցելու հիմնահարցին: Չնայած այդ հիմնահարցին իրենց աշխատություններում անդրադարձել են մի շարք հայ պատմաբաններ և լուսաբանել այն, սակայն նրանցից և ոչ մեկը հատուկ նպատակ չի դրել իր առջև առանձին մենագրություն գրել՝ նվիրված վերոհիշյալ հիմնահարցի ամբողջական լուսաբանմանը: Այնպես որ հայ պատմագրությունը դեռ անելիք ունի այս բնագավառում, մասնավորապես «Սասունցի Դավիթ» տանկային շարասյան կազմավորման և նրա մարտական գործողությունների ամբողջական լուսաբանման ուղղությամբ:

ОСВЕЩЕНИЕ ДЕЯТЕЛЬНОСТИ АРМЯНСКОЙ АПОСТОЛЬСКОЙ ЦЕРКВИ В ГОДЫ ВТОРОЙ МИРОВОЙ ВОЙНЫ В АРМЯНСКОЙ ИСТОРИОГРАФИИ

ВОЛОДЯ ГАСПАРЯН

В годы войны на средства, пожертвованные Армянской Апостольской церковью, были построены две танковые колонны “Давид Сасунский”, первая танковая колонна состоит из 21 танка “Т-34”, вторая – из 22-х танков “Т-34”, которые участвовали в освобождении Украины, Белоруссии и Прибалтики. Идея создания танковых колонн принадлежит викарию католикоса архиепископу Геворгу Чорекчяну, который 23 июня 1945г. был избран

[20] **Տերչանյան Ա.Ս.**, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի գործունեությունը Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին, էջ 65:

Католикосом Всех Армян.

К вопросу помощи, оказанной армии Армянской Апостольской церковью, в частности, создания танковой колонны "Давид Сасунский", обратились в своих работах Ерванд Халеян, Арамаис Мнацаканян, Март Саакян, Климент Арутюнян, Арусяк Терчанян, все они внесли весомый вклад в эту область. Однако, вместе с тем до сегодняшнего дня в армянской историографии не проведено отдельное и всестороннее изучение этого вопроса. Таким образом, армянской историографии еще предстоит работа в этой области, в частности, в направлении полнейшего освещения создания и проведения боевых действий танковой колонной "Давид Сасунский".

Ключевые слова – война, история, армия, историография, армянин, колония, пожертвование.

THE ARMENIAN APOSTOLIC CHURCH'S ACTIVITIES DURING THE WORLD WAR II IN THE ARMENIAN HISTORIOGRAPHY

VOLODYA GASPARYAN

Two tank corps, named *Sassuntsi-Davit*, one consisting of 21 and the other of 22 "T-34" tanks were regimented with the funds raised by the Armenian Apostolic Church during the years of World War II. These corps participated in the liberation of Ukraine, Belarus and the Baltic States. It was Kevork Cheorektjian, the Vicar Archbishop of Catholicos who conceived the idea of regimenting these tank corps. On June 23 of 1945 Cheorektjian was elected the Catholicos of All Armenians. Ervand Khaleyan, Aramayis Mnacakanyan, Mart Sahakyan, Kliment Harutyunyan and Arusyak Terchanyan referred to the support provided to the army by the Armenian Apostolic Church, particularly to regimenting the *Sassuntsi-Davit* tank corps in their studies, thus making a great contribution to the issue. At the same time, it should be admitted that a thorough and free-standing study of the issue has not as yet been conducted. Therefore, the Armenian historiography has a great work to do in this regard, particularly what concerns the formation of the two "Sassuntsi-Davit" Tank corps, and the full coverage of its military activities as well.

Key words – War, history, army, historiography, Armenian, colonies, donations.